ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

GALLERIA NAZIONALE DI ARMENIA

Իտալական արվեստի դրվագները Հայաստանում

Ցուցահանդեսի կատալոգ

Frammenti di arte d’Italia in Armenia

Catalogo della mostra

ԵՐԵՎԱՆ 2024 JEREVAN

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ambasciata d'Italia
Jerevan

Կատալոգը լույս է տեսել
Հայաստանում Իտալիայի դեսպանության հովանավորությամբ
Իտալիայի Հանրապետության օրվա տոնակատարությունների կապակցությամբ

Խորին երախտագիտություն ենք հայտնում
Հայաստանում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Ալֆոնսո Դի Ռիզոյին

Il catalogo è stato pubblicato
con il patrocinio dell'Ambasciata d'Italia in Armenia
in occasione delle celebrazioni della Festa della Repubblica Italiana

Siamo profondamente grati
all'Ambasciatore Straordinario e Plenipotenziario d'Italia in Armenia, Alfonso Di Riso

Շապիկին՝
Յակոպո Տինտորետտո, *Ապոլլոնը և Պանը (դրվագ)*

Տիտղոսաթերթին՝
Բենվենուտո Տիզի (Գարոֆալո), *Տիրամայրը Մանկան հետ*

Sulla copertina:
Jacopo Tintoretto, *Apollo e Pan (frammento)*

Al frontespizio:
Benvenuto Tisi (Garofalo), *Madonna col Bambino*

ISBN 978–99941–79–42–8

Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:
Գրքում տպագրված տեքստերի և պատկերների ցանկացած վերատպություն
կամ այլ տեսակ օգտագործում առանց հրատարակչի գրավոր թույլտվության արգելվում է:

© Հայաստանի ազգային պատկերասրահ · Galleria Nazionale di Armenia, 2024

ԻՏԱԼԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՐՎԱԳՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

FRAMMENTI DI ARTE D'ITALIA IN ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ
Հունիսի 2-ից, 2024

GALLERIA NAZIONALE DI ARMENIA
Dal 2 Giugno 2024

Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն՝
ՄԱՐԻՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Direttore della Galleria Nazionale di Armenia
MARINA HAKOBYAN

Ցուցահանդեսի համադրողներ՝
ՄԱՐԻՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԱՐԻՆԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Curatori della mostra
MARINA HAKOBYAN
MARINA YEGHIAZARYAN

Արվեստաբանական տեքստերի հեղինակ՝
ՄԱՐԻՆԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Autore di testi artistici
MARINA YEGHIAZARYAN

Խմբագիրներ՝
ՍԵՐԳԵՅ ԽԱՉԻԿՕՂԼՅԱՆ
ԱՐԱ ԽԱՉԻԿՕՂԼՅԱՆ
ԱՆՆԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Editori
SERGEY KHACHIKOGHLYAN
ARA KHACHIKOGHLYAN
ANNA YEGHIAZARYAN

Թարգմանիչներ՝
ԱՐԱՄ ՄԿՐՅԱՆ
ԱՐԵՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Traduttori
ARAM MKRYAN
AREVIK GRIGORYAN

Լուսանկարիչներ՝
ՍՐԱՊԻՈՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՄԵՐԻ ԵՓՐԵՄՅԱՆ

Fotografi
SRAPION DANIELYAN
MERI YEPREMYAN

Ցուցահանդեսի ձևավորում և կատալոգի կազմ՝
ԻՎԱՆԱ ԿՐՉԱԴԻՆԱՑ

Design della mostra e copertina del catalogo
IVANA KRCADINAC

Կատալոգի ձևավորում՝
ԱՐԱ ԽԱՉԻԿՕՂԼՅԱՆ

Design del catalogo
ARA KHACHIKOGHLYAN

Իտալիայի Հանրապետության տոնի շրջանակներում Հայաստանի ազգային պատկերասրահում կազմակերպված «Իտալական արվեստի դրվագները Հայաստանում» բացառիկ և խորհրդանշական ցուցադրությունն ունի ոչ միայն պատմական-գեղարվեստական արժեք ու նշանակություն, այլև երկու երկրների միջև քաղաքական-դիվանագիտական, մշակութային-հասարակական կապերի արժևորման և վերարժևորման, ընդգծման ու զարգացման կարևոր գործառույթ: Իտալիայի և Հայաստանի բարեկամական փոխհարաբերություններն ու առնչություններն ունեն հազարամյակների պատմություն և իրենց ակունքներով հասնում են Հին աշխարհ՝ ձևավորելով ամենատարբեր ոլորտներում շարունակաբար ամրապնդվող համագործակցության ու փոխազդեցության կայուն միջավայր:

Հայաստանում Իտալիայի դեսպան Ալֆոնսո Դի Ռիզոյի առաջարկով կազմակերպված այս ծավալուն պատկերահանդեսի շրջանակներում առաջին անգամ միևնույն հարթակում ներկայացվում են Ազգային պատկերասրահում պահվող 14–20-րդ դդ. Իտալիայի արվեստի ինքնատիպ «դրվագները», որոնք բացահայտում են իտալական կերպարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի 600-ամյա մշակութային տարբեր փուլերն ու զարգացումները: Ցուցադրությունն ընդգրկում է աշխարհահռչակ այնպիսի արվեստագետների և նրանց շրջանի ստեղծագործություններ, ինչպիսիք են Տինտորետտոն ու Ռիչչին, Գվերչինոն ու Ստրոցցին, Գվարդին, Կանալետտոն, քանդակագործներ Դոնատելլոն ու Կանովան, գծանկարի ու փորագրանկարչության փայլուն վարպետներ Ֆարինատին ու Պիրանեզին, Կամբիազոն ու Պաննինին, և այլք:

Շնորհավորում եմ բոլորիս հայ-իտալական երկկողմ հարաբերությունների խթանմանը և հետագա զարգացմանն ու ամրապնդմանը նպաստող այս կարևոր իրադարձության կապակցությամբ:

Իմ երախտագիտությունն եմ հայտնում դեսպան Ալֆոնսո Դի Ռիզոյին Իտալիայի ազգային տոնի շրջանակներում ցուցադրության կազմակերպման առաջարկի և այս կարևոր պատկերագրքի հրատարակմանն աջակցելու համար:

Նաև շնորհակալություն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր անգնահատելի ներդրում են ունեցել ցուցահանդեսի իրականացման գործում: Վստահ եմ, որ այն մեծապես կնպաստի մեզանում թե՛ իտալական արվեստի, թե՛ Հայաստանի ազգային պատկերասրահի հարուստ հավաքածուի վերարժևորմանն ու հանրահռչակմանը:

Մաղթում եմ մեր պետություններին խաղաղություն, բարեկեցություն և ստեղծագործական անսպառ եռանդ:

Ժաննա Անդրեասյան

Հայաստանի Հանրապետության
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

ՋՈՎԱՆՆԻ ՊԱՈԼՈ ՊԱՆՆԻՆԻ, 1691/92–1765
ՀՌՈՄԵԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԻ ՄԱՍ
ստվարաթուղթ, երանգավորված թուղթ, ծայր և վրձին դարչնագույն, սև և մոխրագույն երանգներով, 39 x 26

GIOVANNI PAOLO PANNINI, 1691/92–1765
PARTE DEL FORO ROMANO
cartoncino, carta colorata, punta e pennello nelle tonalità del marrone, del nero e del grigio, 39 x 26

L’esclusiva e la simbolica mostra “Frammenti di arte d’Italia in Armenia”, organizzata presso la Galleria Nazionale di Armenia in occasione della Festa della Repubblica Italiana, non ha solo un valore e un significato storico-artistico, ma svolge anche l’importante funzione di valorizzare, rivalutare, sottolineare e sviluppare i rapporti politico-diplomatici e culturali-sociali tra i due Paesi. Le relazioni e i legami amichevoli tra Armenia e Italia hanno una storia millenaria, con radici che risalgono al mondo antico, formando un ambiente stabile di rafforzamento continuo della cooperazione e dell’interazione in vari settori.

Nell’ambito di questa ampia mostra d’arte, organizzata su impulso dell’Ambasciatore d’Italia in Armenia, Alfonso Di Riso, per la prima volta vengono presentati sulla stessa piattaforma dei particolari “frammenti” dell’arte italiana dei secoli XIV–XX presentati nella Galleria Nazionale, rivelando le varie fasi e gli sviluppi culturali di 600 anni delle belle arti e delle arti decorative ed applicate del Belpaese. La mostra comprende opere appartenenti a pittori di fama mondiale e al loro periodo, tra cui Tintoretto e Ricci, Guercino e Strozzi, Guardi, Canaletto, a scultori quali Donatello e Canova, a brillanti maestri del disegno e dell’incisione come Farinati, Piranesi, Cambiaso, Pannini e altri.

Mi congratulo con tutti per questo importante evento che contribuisce alla promozione, all’ulteriore sviluppo e rafforzamento delle relazioni bilaterali armeno-italiane.

Esprimo la mia gratitudine all’Ambasciatore Alfonso Di Riso per la proposta di organizzare la mostra in occasione della Festa Nazionale Italiana e per il sostegno dato per la pubblicazione di questo notevole catalogo.

Desidero inoltre ringraziare tutti coloro che hanno dato un prezioso contributo alla realizzazione della mostra. Sono fiduciosa che essa contribuirà notevolmente ad una ulteriore rivalutazione e divulgazione sia dell’arte italiana sia della ricca collezione della Galleria Nazionale di Armenia.

Auguro ai nostri Stati pace, prosperità ed energia creativa inesauribile.

Zhanna Andreasyan

Ministro dell’Istruzione, della Scienza, della Cultura e dello Sport
della Repubblica di Armenia

ՄԱՈՒՐՈ ԳԱՆԴՈԼՖԻ, 1764–1834
ՍԲ. ՀԻԵՐՈՆԻՄՈՍԸ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Է ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ՄԱՆՈՒԿ ՀԻՍՈՒՍԻՆ
թուղթ, հատիչ, օֆորտ, 70 x 46 / 83 x 53

MAURO GANDOLFI, 1764–1834
SAN GIROLAMO ALFABETIZZA GESÙ BAMBINO
carta, bulino, acquaforte, 70 x 46 / 83 x 53

Ցանկանում եմ իմ խորին երախտագիտությունը հայտնել «Իտալական արվեստի դրվագները Հայաստանում» ցուցահանդեսի կազմակերպիչներին, որի բացումը տեղի է ունեցել հունիսի 2-ին՝ Իտալիայի Հանրապետության տոնի առթիվ, Երևանում գտնվող և մեծ հեղինակություն վայելող Հայաստանի ազգային պատկերասրահում:

Ցուցահանդեսն արտացոլում է Հայաստանի և Իտալիայի միջև գոյություն ունեցող արդյունավետ հարաբերությունները, երկու երկիր՝ միավորված բարեկամության և եղբայրության ամուր կապերով և միմյանց հազարամյա հարուստ ավանդույթների պահապանը հանդիսացող մշակույթների փոխադարձ խորին գնահատմամբ: Այս ցուցահանդեսը մեր պետությունների միջև մշակութային համագործակցության ամրապնդմանն ուղղված նախաձեռնությունների մաս է կազմում. ցանկություն, որի մասին նշել եմ անցյալ տարվա փետրվարին Հայաստան կատարած այցիս ընթացքում:

Եվ հենց իմ այդ այցի ընթացքում, որի շրջանակներում ես հաճելի հանդիպումներ եմ ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի հետ, քննարկումներ են եղել մշակութային ոլորտում համագործակցության ծրագրերի մասին և ամրապնդվել են մեր հարաբերությունների զարգացման հիմքերը:

Համոզված եմ, որ մշակույթի խթանումը կարևորագույն գործոն է մարդկանց կյանքի որակի բարձրացման և անփոխարինելի աղբյուր՝ ոգու սնուցման համար: Բացի այդ, մշակութային ժառանգությունը՝ և՛ իտալականը, և՛ հայկականը, ինքնութենական ուժեղ բնույթից բացի, նաև շարժիչ ուժ է տնտեսական ու սոցիալական զարգացման համար, ինչպես նաև արժեքավոր հնարավորությունների աղբյուր՝ այն տարածքի համար, որտեղ այն գտնվում է:

Այս ցուցահանդեսը դրա վառ ապացույցն է: Այն ի ցույց է դնում Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուի հարստությունը, որտեղ պահպանվում են հայտնի իտալացի նկարիչների ստեղծագործություններ:

Դոնատելլոյի, Տինտորետտոյի, Ստրոցցիի, Գվերչինոյի, Ռիչչիի, Կանալետտոյի և Կանովայի պես անվանի վարպետների ստեղծագործությունների միջոցով հայ հանրությունը յուրօրինակ ճանապարհորդություն է կատարում դեպի Իտալիա: Վստահ եմ, որ այցելուները կգնահատեն ցուցադրված գլուխգործոցների արտասովոր բնույթը, և հուսով եմ, որ ցուցահանդեսը կկարողանա փոխադարձ մշակութային խոր հարստացման լրացուցիչ միջոց դառնալ:

Եզրափակելով՝ ցանկանում եմ անկեղծ երախտագիտությունս հայտնել իմ գործընկեր Ժաննա Անդրեասյանին և Հայաստանի ազգային պատկերասրահին՝ այս նշանակալից ցուցահանդեսային նախագծի իրականացմանը ցուցաբերած բացառիկ աջակցության, ինչպես նաև Երևանում Իտալիայի դեսպան Ալֆոնսո Դի Ռիզոյին՝ փայլուն նախաձեռնության համար:

Ջեննարո Սանջուլիանո

Իտալիայի Հանրապետության
Մշակույթի նախարար

Desidero esprimere il mio vivo apprezzamento ai promotori della mostra "Frammenti di arte d'Italia in Armenia", inaugurata il 2 giugno presso la prestigiosa Galleria Nazionale di Armenia in Jerevan, in occasione della Festa della Repubblica Italiana.

L'esposizione riflette i molto fecondi rapporti tra due Nazioni, Armenia e Italia, unite da solidissimi vincoli di amicizia e fratellanza e da un profondo apprezzamento delle reciproche culture, entrambe custodi di una ricca tradizione millenaria. Essa si colloca nel solco delle iniziative volte al rafforzamento della cooperazione culturale tra i nostri Stati, volontà che non ho mancato di sottolineare durante la mia visita in Armenia nel febbraio dello scorso anno.

E proprio durante tale mia missione, nel corso della quale ho avuto il piacere di incontrare il Primo Ministro Nikol Pashinyan e il Ministro dell'Educazione, Scienza, Cultura e Sport Zhanna Andreasyan, si è discusso di progetti di collaborazione in campo culturale e sono state consolidate le basi per lo sviluppo delle nostre relazioni.

Sono convinto che la promozione della cultura sia un fattore determinante per l'innalzamento della qualità della vita delle persone e fonte indispensabile di nutrimento dello spirito. D'altra parte, il patrimonio culturale, sia italiano sia armeno, oltre ad avere un forte carattere identitario, è un motore di sviluppo economico e sociale e fonte preziosa di opportunità per il territorio su cui esso insiste.

Questa esposizione ne è una chiara dimostrazione. Essa illustra la ricchezza della collezione della Galleria Nazionale di Armenia, che conserva opere di celebri artisti italiani.

Attraverso in particolare le opere di maestri rinomati come Donatello, Tintoretto, Strozzi, Guercino, Ricci, Canaletto e Canova il pubblico armeno compie uno straordinario viaggio in Italia. Sono sicuro che i visitatori sapranno apprezzare la straordinarietà dei capolavori esposti e auspico che la mostra possa essere un ulteriore veicolo di profondo arricchimento culturale reciproco.

Desidero in conclusione esprimere sincera gratitudine alla mia omologa Zhanna Andreasyan e alla Galleria Nazionale di Armenia per l'eccezionale sostegno dato alla realizzazione di questo significativo progetto espositivo nonché all'Ambasciatore d'Italia in Jerevan, Alfonso Di Riso per la brillante iniziativa.

Gennaro Sangiuliano

Ministro della Cultura
della Repubblica Italiana

ՋՈՎԱՆՆԻ ԲԵՆԵԴԵՏՏՈ ԿԱՍՏԻԼՅՈՆԵ, 1609–1664
ՏՂԱՄԱՐԴՈՒ ԳԼԽԱՆԿԱՐ
թուղթ, օֆորտ, չոր ասեղ, 18,2 x 15

GIOVANNI BENEDETTO CASTIGLIONE, 1609–1664
TESTA DI UOMO
carta, acquaforte, puntasecca, 18,2 x 15

◁

ՊԻԵՏՐՈ ԴԻ ԳՈՏՏԱՐԴՈ ԳՈՆԶԱԳԱ, 1751–1831
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՖԱՆՏԱԶԻԱ
ՍՅՈՒՆԱՇԱՐՈՎ
թուղթ, ծայր և վրձին դարչնագույն երանգով, բիստր, 25 x 9,7

PIETRO DI GOTTARDO GONZAGA, 1751–1831
FANTASIA ARCHITETTONICA CON COLONNATO
carta, punta e pennello nelle tonalità del marrone, bistro, 25 x 9,7

HONOS ALIT ARTES, OMNESQUE INCENDUNTUR AD STUDIA GLORIA
(Պատիվը սնուցում է արվեստը, և բոլորը փառքով են խրախուսվում սովորել)

Կիկերոն, «Տուսկուլական զրույցներ», 1, 4

ԼՈՒԿԱ ԿԱՄԲԻԱԶՈ, 1527–1585
ՎԱԶՈՂ ՊԱՏԱՆԻՆ
թուղթ, ծայր և վրձին դարչնագույն երանգով, սև կավճի հետքեր, 28 x 17,5

LUCA CAMBIASO, 1527–1585
IL GIOVANE CHE CORRE
carta, punta e pennello nelle tonalità del marrone, segni di gesso nero, 28 x 17,5

Ինձ համար պատիվ է Իտալիայի Հանրապետության տոնի առթիվ Հայաստանի ազգային պատկերասրահում բացել «Իտալական արվեստի դրվագները Հայաստանում» ցուցահանդեսը: Արդեն սկսվել է իմ՝ որպես Իտալիայի դեսպանի ճանապարհորդության վերջին քառորդն այստեղ՝ Երևանում. խիստ իմաստով դիվանագիտության, բայց նաև «մշակութային դիվանագիտության» ճանապարհորդություն, որը հաստատում է ավանդական և շարունակական հավատարմությունը մշակութային առաջարկին, որին նշանակալի հանձնառությամբ և ջերմեռանդ կրքով նվիրված է այս դեսպանությունը:

Ցանկանում եմ մի էքսկուրսի միջոցով հիշել ամենաարժեքավոր և հետաքրքրական պահերը, որոնք բնութագրել են վերջին տարիներին մեր դեսպանության մշակութային առաջարկը հայ հանրությանը: Առաջին հերթին կուզեի նշել «Մեկ օր Պոմպեյում» խորագիրը կրող մեծ ցուցահանդեսը, որը նույնպես անցկացվել է Ազգային պատկերասրահում, Երևանի ժամանակակից արվեստի թանգարանի հետ համատեղ կազմակերպված «Հետքեր» լուսանկարչական ցուցահանդեսը, մուրալ արվեստի ստեղծագործությունները, որոնցով կարելի է հիանալ մայրաքաղաքի փողոցներով զբոսնելիս, ինչպիսիք են՝ «Մշակույթը կփրկի աշխարհը» ստեղծագործությունը, որն այդ տեսակի առաջին նախագիծն է այստեղ՝ իրականացված որևէ դեսպանության կողմից, ինչպես նաև վերջերս իրականացված «Քոչարը և Վենետիկը» ստեղծագործությունը, որն այն խոր կապի խորհրդանիշն է, որ կապում է Հայաստանը Իտալիայի և, մասնավորապես, ծովածոցային այդ շքեղ քաղաքի հետ: Հնագիտական ոլորտում նաև նշեմ երկու երկրների միջև արդյունավետ համագործակցությունը՝ մասնավորապես անդրադառնալով Դվինի և Արուճի հնավայրերին: Երաժշտական բնագավառում հիշատակեմ Լինա Սաստրիի համերգը Երևանի օպերային թատրոնում, Կիեզա–Բալյինի դուետի համերգները, ինչպես նաև Դանիելե Դի Բոնավենտուրայի համերգները Գորիսում և Կապանում: Վերջիններս այս դեսպանության կողմից մայրաքաղաքից դուրս կազմակերպված բազմաթիվ միջոցառումների օրինակներից են, որոնք վկայում են հայկական տարբեր տարածաշրջանների նկատմամբ հետաքրքրության մասին: Ի վերջո, Երևանից դուրս իրականացված այլ նախաձեռնությունների թվում կցանկանայի նշել «Գրան Դուո Իտալիանո» (Մաուրո Տորտորելլի և Անջելա Մերուզո) դուետի համերգը, որը տեղի ունեցավ Գյումրիում Իտալիայի պատվավոր հյուպատոսության նոր գրասենյակի բացման առթիվ, Շիրակի մարզային գրադարանում իտալական բաժնի ստեղծումը, ինչպես նաև Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում իտալական դիզայնի անկյունի ստեղծումը:

Անցյալի այս հակիրճ ամփոփումը մեզ բերում է դեպի ներկան, դեպի այն միջոցառումը, որը նշվում է այսօր և որը մեր դեսպանության աջակցությամբ իրականացվող մշակութային նախաձեռնությունների նշանակալի և լայն շրջանակի ևս մեկ մասնիկն է: «Իտալական արվեստի դրվագները Հայաստանում» ժամանակավոր ցուցադրությունը ներկայացնում է իտալական արվեստի հարստությունը՝ ընդգրկելով 14-ից մինչև 20-րդ դարերն ընկած ժամանակաշրջանը: Ցուցադրված են նկարներ, քանդակներ, գործվածքներ և դեկորատիվ-կիրառական աշխատանքներ, որոնք ստեղծվել են այնպիսի մեծանուն վարպետների կողմից, ինչպիսիք են Դոնատելլոն, Տինտորետտոն, Ստրոցցին, Գվերչինոն, Ռիչչին, Կանալետտոն և Կանովան: Ցուցադրությունը ոչ միայն ընդգծում է իտալական արվեստի գեղեցկությունն ու բազմազանությունը, այլև հանրությանը եզակի հնարավորություն է ընձեռում հիանալու այն ստեղծագործություններով, որոնք տասնամյակներ շարունակ գտնվել են Ազգային պատկերասրահում, բայց որոնք այժմ առաջին անգամ են ցուցադրվում մեկ ցուցահանդեսի շրջանակներում:

Եզրափակում եմ հակիրճ խոսքս՝ ջերմ և անկեղծ երախտագիտությունս հայտնելով Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն Մարինա Հակոբյանին, որը մշտապես մեծ պատրաստակամություն է ցուցաբերել համագործակցելու Իտալիայի դեսպանության հետ: Շնորհակալություն եմ հայտնում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանին, Իտալիայի Հանրապետության մշակույթի նախարար, պրոֆեսոր Ջեննարո Սանջուլիանոյին այս նախաձեռնությանը խանդավառությամբ աջակցելու համար:

Ալֆոնսո Դի Ռիզո

Հայաստանում Իտալիայի դեսպան

ԲԵՆԻՆՅՈ ԲՈՍՍԻ, 1727–1792
ՏՂԱՅԻ ԳԼԽԱՆԿԱՐ, 1761
թուղթ, հատիչ, չոր ասեղ, 17 x 12

BENIGNO BOSSI, 1727–1792
TESTA DI RAGAZZO, 1761
carta, bulino, puntasecca, 17 x 12

HONOS ALIT ARTES, OMNESQUE INCENDUNTUR AD STUDIA GLORIA
(L'onore alimenta le arti, e tutti sono spinti agli studi dalla gloria)

Cicerone, *Tusculanae disputationes,* 1, 4

ԱՈՒՐԵԼԻ ՆԻԿԿՈԼՈ (ԻՏԱԼԱԿԱՆ ԴՊՐՈՑ), 19-ՐԴ Դ.
ՌԱՖԱՅԵԼԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ
թուղթ, հատիչ, օֆորտ, 52 x 39

AURELI NICCOLÒ (SCUOLA ITALIANA), XIX SEC.
RITRATTO DI RAFFAELLO
carta, bulino, acquaforte, 52 x 39

È per me un onore inaugurare, presso la Galleria Nazionale di Armenia, la mostra "Frammenti di arte d'Italia in Armenia" in occasione della Festa della Repubblica. È cominciato oramai l'ultimo quarto del mio percorso qui a Jerevan in qualità di Ambasciatore d'Italia, un percorso di diplomazia *stricto sensu*, ma altresì di "diplomazia culturale", a conferma del tradizionale e continuo impegno nell'offerta culturale a cui questa Ambasciata si dedica con rilevante impegno e fervente passione.

Mi piacerebbe, attraverso un *excursus*, ricordare i momenti di maggiore valore e interesse che hanno caratterizzato l'offerta culturale della nostra Ambasciata al pubblico armeno negli ultimi anni. Prima fra tutte, vorrei citare l'altra grande mostra dal titolo "Un giorno a Pompei", tenutasi sempre presso la Galleria Nazionale; la mostra fotografica "Tracce" in collaborazione con il Museo di Arte Moderna di Jerevan; le opere murali ammirabili percorrendo le strade della capitale "La cultura salverà il mondo", primo progetto di tale genere promosso qui da un'Ambasciata, e il recentissimo "Kochar e Venezia", emblema del profondo legame che lega l'Armenia all'Italia e, in particolare, alla splendida città lagunare. In ambito archeologico, vorrei inoltre rammentare la proficua collaborazione tra i due paesi, con particolare riferimento ai siti di Dvin e Aruch. Sul versante musicale, rammento i concerti di Lina Sastri all'Opera di Jerevan e del duo Chiesa–Baglini nonché quello di Daniele Di Bonaventura a Goris e Kapan, esempio quest'ultimo delle molteplici attività organizzate da questa Ambasciata al di fuori della capitale a dimostrazione dell'interesse per le diverse realtà territoriali armene. Tra le altre iniziative fuori da Jerevan vorrei infine richiamare il concerto del Gran Duo Italiano (Mauro Tortorelli e Angela Meluso), svoltosi in occasione dell'inaugurazione della nuova sede del Consolato Onorario a Gyumri, la creazione di una sezione italiana nella Biblioteca Regionale di Shirak e quella di un angolo del design italiano presso il Centro Tecnologico di Gyumri.

Questo succinto riepilogo del passato ci porta al presente, all'evento che si sta oggi celebrando, un momento ulteriore della significativa e ampia gamma di iniziative culturali sostenute dalla nostra Ambasciata. L'esposizione temporanea "Frammenti di arte d'Italia in Armenia" offre uno sguardo sulla ricchezza dell'arte italiana, abbracciando un arco temporale che va dal XIV al XX secolo. In mostra si possono ammirare dipinti, sculture, tessuti e opere ornamentali realizzate da grandi maestri quali Donatello, Tintoretto, Strozzi, Guercino, Ricci, Canaletto e Canova. La rassegna non solo celebra la bellezza e la varietà dell'arte italiana, ma offre altresì al pubblico l'opportunità unica di ammirare opere presenti da decenni nella Galleria Nazionale, esposte per la prima volta ora nell'ambito di un'unica mostra.

Concludo il mio breve intervento rivolgendo un caloroso e sincero ringraziamento alla Direttrice della Galleria Nazionale di Armenia Marina Hakobyan, la quale ha dimostrato sempre massima apertura e disponibilità a collaborare con l'Ambasciata d'Italia. Esprimo infine gratitudine sia alla Ministra dell'Istruzione, Scienza, Cultura e Sport della Repubblica di Armenia Zhanna Andreasyan sia al Ministro della Cultura della Repubblica Italiana Prof. Gennaro Sangiuliano per aver voluto sostenere con grande entusiasmo l'iniziativa.

Alfonso Di Riso

Ambasciatore d'Italia in Armenia

ԼՈՒԻՋԻ (ԼՈՎԻՍ) ԿՈՒՆԵԳՈ, 1757–1823
ԲԵԱՏՐԻՉԵԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ, 1785
թուղթ, հատիչ, օֆորտ, 27 x 18 / 42,5 x 28,5

LUIGI (LOVIS) CUNEGO, 1757–1823
RITRATTO DI BEATRICE, 1785
carta, bulino, acquaforte, 27 x 18 / 42,5 x 28,5

ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԻՏԱԼԻԱ

ԴՈՄԵՆԻԿՈ ՄԱՐԻԱ ԿԱՆՈՒՏԻ, 1625–1684
ՍՈՒՐԲ ԱՆԴՐԵԱՍԻ ՉԱՐՉԱՐԱՆՔԸ
թուղթ, հատիչ, չոր ասեղ, 39 x 29,5

DOMENICO MARIA CANUTI, 1625–1684
LA PASSIONE DI SANT'ANDREA
carta, bulino, puntasecca, 39 x 29,5

Հայաստանի ազգային պատկերասրահը և Հայաստանում Իտալիայի դեսպանությունը ներկայացնում են «Իտալական արվեստի դրվագները Հայաստանում» ցուցադրությունը՝ նվիրված Իտալիայի պատմության նշանավոր իրադարձությանը՝ Հանրապետության հռչակմանը:

Իտալիայի ազգային տոնի նշումը մեր պատկերասրահում ունի խորհրդանշական բնույթ: Հայաստանում կերպարվեստի խոշորագույն և հայկական արվեստի հավաքածուով ամենամեծ մշակութային օջախն ընդգրկում է հայկական և արտասահմանյան կերպարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի ավելի քան 41 000 ցուցանմուշ, ինչպես նաև հայ և օտարերկրացի անվանի արվեստագետներին, կարևոր իրադարձություններն ու դրվագները ներկայացնող փաստավավերագրական ու գեղարվեստական արժեք ունեցող լուսանկարների, նոթատետրերի ու նամակների, հոդվածների և անձնական իրերի շուրջ 200 000 նմուշ ներառող բացառիկ հավաքածու: Հարուստ ու բազմաբնույթ ժառանգության ձևավորման և համալրման քաղաքականության հիմքը դրել է դեռևս Հայաստանի թանգարանի գեղարվեստական բաժնի առաջին ղեկավար, հետագայում Պատկերասրահի տնօրեն Ռուբեն Դրամբյանը 1920-ական թթ.՝ նախանշելով կարևորագույն կառույցի հետագա ուղին և հավաքածուի բովանդակությամբ ու տրամաբանությամբ այն դարձնելով եվրոպական խոշորագույն թանգարանների չափանիշներին համապատասխան:

Առաջին անգամ Հայաստանում իտալական մշակույթի տարբեր դարաշրջաններն ու գերիշխող տենդենցները, գեղարվեստական միտումներն ու այլազան շերտերը ներկայացնող այս ծավալուն ու բազմաթեմատիկ ցուցադրությունը շարունակում է իտալական հարուստ ժառանգությունն ու պատմությունը, արվեստն ու մշակույթը բացահայտող նախագծերի շարքը մեր թանգարանում և խորհրդանշում է երկու հնագույն քաղաքակրթությունների դարավոր բարեկամությունն ու խորագույն կապերը: Իտալական արվեստի առաջին նմուշները մուտք են գործել Թանգարան դեռևս 1920-ական թթ., հետագայում հավաքածուն ակտիվ կերպով և հետևողականորեն համալրվել է նվիրատվությունների, փոխանցումների ու ձեռքբերումների միջոցով:

Պատկերասրահի արտասահմանյան արվեստի հավաքածուի կարևոր մաս կազմող և 14–20-րդ դդ. թվագրվող շուրջ 100 գեղանկարչական երկերը, գծանկարն ու փորագրությունները, քանդակն ու դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշները ներկայացնում են իտալական արվեստի զարգացման ու կայացման 600-ամյա ժամանակաշրջանը և ի ցույց դնում մեր թանգարանային հավաքածուի իրական գլուխգործոցները:

Ֆլորենտական ու վենետիկյան, ճենովական ու ֆերրարյան, վերոնյան ու հռոմեական և գեղարվեստական այլ դպրոցների անվանի վարպետների առանձին ստեղծագործություններով ներկայացվող և տարբեր ժամանակների առաջադրած լուծումների ու պատկերագրական ավանդույթների համադրմամբ-հակադրմամբ, գեղանկարչական տարբեր հակումների, էսթետիկական խնդիրների, ստեղծագործական մեթոդների և ոճաձևաբանական հնարքների ողջ այլազանությամբ հատկանշվող հավաքածուն ունի պատմական և գեղարվեստական անգնահատելի արժեք:

Հավաքածուի ամենավաղ թվագրված ստեղծագործություններից են միջնադարյան կայուն աշխարհայեցողության և Վերածնության դարաշրջանի գեղարվեստական նոր մտածողության որոշակի սինթեզմամբ բնութագրվող Լորենցո դի Բիչչիի դպրոցին վերաբերող «Սուրբ Կատարինեի նշանադրությունը» և անհայտ նկարչի «Տիրամայրը»: Իտալական կերպարվեստում լայնորեն տարածված ու սիրված՝ Աստվածամոր կերպարի թեման Պատկերասրահում շարունակում է կրոնական սյուժեներով ու որմնանկարների դեկորացիաներով ճանաչված Ֆերրարայի առաջատար նկարիչներից մեկը՝ Բենվենուտո Տիզին, որն առավել հայտնի էր Գարոֆալո անվամբ: Ցուցադրության ընթացքում «Մադոննայի» պատկերներին հանդիպում ենք նաև 18-րդ դ. նեապոլիտանական ու հռոմեական դպրոցների վարպետներ Սեբաստիանո Կոնկայի ու Ֆրանչեսկո Մանչինիի կտավներում: Վերածնության շրջանը ներկայացնող հավաքածուում առանձնակի տեղ է գրավում աշխարհահռչակ Տինտորետտոյի «Ապոլլոնը և Պանը» կտավը:

Կերպավորման մեթոդների ու տեխնիկական հնարքների, առաջ եկող ուղղությունների, արծարծվող գեղարվեստական պրոբլեմների ու սյուժեների բազմազանությամբ, մտածողության ու գաղափարների հարստությամբ է բնութագրվում 17-րդ դ. իտալական արվեստը: Այս շրջանը Պատկերասրահում ներկայացված է իտալացի անվանի արվեստագետներ Սեբաստիանո Ռիչչիի և Անտոնիո Մոլինարիի, Ջակոմո Կավեդոնեի և այլոց կրոնական թեմաներով, Ջուլիո Կարպիոնիի դիցաբանական պատկերներով, Ջովաննի Գիզոլֆիի՝ կերպարային լուծումների արտահայտչականությամբ հատկանշվող բնապատկերներով: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նշանավոր արվեստագետ Բեռնարդո Ստրոցցիի կամ, ինչպես նկարչին հաճախ կոչում էին, Կապպուչչինոյի՝ բարոկկոյի հնարքներով բնութագրվող Նիկոլա Կուչչիի և բոլոնյան դպրոցի վառ ներկայացուցիչ Գվերչինոյի՝ սենատոր Բարջելլինիի դիմանկարները: Հատկանշական է, որ Կուչչիի դիմապատկերը կրոնական ու դիցաբանական սյուժեներով հայտնի նկարչի՝ այդ ժանրում արված եզակի նմուշներից է:

ՎԻՆՉԵՆՑՈ ԼՈՒԿԿԱՐԴԻ ԲԻԼԴԱՈՒԵՐ, 1811–1876
ԱՂԱՎՆԻՆԵՐՈՎ ԱՂՋԻԿԸ
մարմար, 87 x 60 x 61

VINCENZO LUCCARDI BILDHAUER, 1811–1876
RAGAZZA CON I PICCIONI
marmo, 87 x 60 x 61

ԱՆՀԱՅՏ ԻՏԱԼԱՑԻ ՆԿԱՐԻՉ, 19-ՐԴ Դ.
ՓՈՂՈՑԻ ՏԵՍԱՐԱՆ ԶԱՆԳԱԿԱՏՆՈՎ
թուղթ, ջրաներկ, 36,7 x 25,2

PITTORE SCONOSCIUTO ITALIANO, XIX sec.
VEDUTA DI STRADA CON CAMPANILE
carta, acquerello, 36,7 x 25,2

18-րդ դարի իտալական կերպարվեստի «հայտնագործություններից» են վենետիկյան դպրոցի ծաղկման նոր շրջանը նշանավորող «վեդուտաները», կամ քաղաքային տեսարանները: Հայտնի հուշարձանների ու ճարտարապետական մանրամասների, տեսարժան վայրերի ու մեծ ջրանցքների պատկերումներով հայտնի ժանրը Ազգային պատկերասրահում ներկայացված է ժամանակի առաջատար արվեստագետներ Կանալետտոյի դպրոցի վենետիկյան ջրանցքներով ու Ֆրանչեսկո Գվարդիի «Աստիճանների տեսարանով»:

Թանգարանի ժառանգության կարևոր մաս է կազմում հայկական և արտասահմանյան գրաֆիկան: 16–19-րդ դդ. իտալական ունիկալ և տպագրական գրաֆիկայի արժեքավոր հավաքածուն ընդգրկում է աշխարհահռչակ այնպիսի արվեստագետների փորագրանկարներ, գծանկարներ ու ջրանկարներ, ինչպիսիք են 16-րդ դ. Վերոնայում աշխատող գեղանկարիչ, փորագրիչ, ճարտարապետ Պաոլո Ֆարինատիին, ճենովական դպրոցի հայտնի մանիերիստ արվեստագետ, պալատների ու եկեղեցիների բազմաթիվ որմնանկարների ստեղծող Լուկա Կամբիազոն, 18-րդ դ. քաղաքային բնապատկերների հայտնի վարպետ Ջովաննի Պաննինին, և այլք: Տպագրական գրաֆիկայի հավաքածուում կարևոր տեղ է զբաղեցնում իտալացի հայտնի հնագետ ու ճարտարապետ, վիրտուոզ փորագրանկարիչ, օֆորտի վարպետ Ջովաննի Պիրանեզիին, որի քաղաքային տեսարանները իտալական հավաքածուի լավագույն ստեղծագործություններից են:

15–19-րդ դդ. իտալական քանդակի՝ առանձին հեղինակներով ու դպրոցներով ներկայացված հավաքածուի ամենավաղ թվագրվող ցուցանմուշն է Ռենեսանսի նորարար, քանդակագործության մեջ հեղափոխական գաղափարներով հայտնի Դոնատելլոյի «Տիրամայրը մանկան հետ» մարմարե հարթաքանդակը, որը Վաղ Վերածննդի լավագույն օրինակներից է: Հատուկ ուշադրության է արժանի նաև 18-րդ դարավերջի – 19-րդ դարասկզբի իտալական նեոկլասիցիզմի խոշորագույն ներկայացուցիչ, Հին Հունաստանի ու Հռոմի քաղաքակագործությամբ ոգեշնչված, «մարմարե մակերեսների վարպետ» Անտոնիո Կանովայի «Ջոջացող Մարիամ Մագդաղենացին»: Կլասիցիզմի էսթետիկական խնդիրներն ու գեղարվեստական ավանդները է՛լ ավելի խտանում-կերպավորվում են «Աղավնիներով աղջկա» հեղինակ Վինչենցո Լուկկարդիի արվեստում:

Ցուցադրությունը լրացնում են 16–20-րդ դդ. դեկորատիվ-կիրառական արվեստի՝ իտալական մայոլիկայի յուրօրինակ նմուշներն ու ֆլորենտական, վենետիկյան, պիեմոնտյան ոսկեթել ու արծաթաթել, վուշե, մետաքսե, թավշե գործվածքները: Ուշագրավ է 16-րդ դ. հարսանեկան սնդուկը, որն առավել հայտնի է որպես «կասոնե»:

Հայաստանի ազգային պատկերասրահում իտալական արվեստի հավաքածուի շուրջ վեցդարյան պատմությունն ամփոփող այս ալբոմ-կատալոգն ընդգրկում է պատկերահանդեսում ցուցադրվող նմուշները, որոնց մի մասը ներկայացվում և տպագրվում է առաջին անգամ:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում Հայաստանում Իտալիայի դեսպան Ալֆոնսո Դի Ռիզոյին, դեսպանության աշխատակիցներին, ինչպես նաև Ազգային պատկերասրահի անձնակազմին այս կարևոր նախաձեռնությունն իրականացնելու համար, որն անշուշտ նպաստում է իտալական մշակույթի և արվեստի առավել բազմակողմանի ընկալմանը և մեր երկու երկրների մշակութային կապերի խորացմանն ու ամրապնդմանը:

Մարինա Հակոբյան

Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն,
ցուցահանդեսի համադրող

ՀԱԽՃԱՍԱԼԻԿ, 19–20-ՐԴ ԴԴ.
կավ, վերջնարակյա և ներջնարակյա նկարազարդում

PIASTRELLA, XIX–XX SEC.
argilla, decorazione soprasmalto e sottosmalto

UNO STRAORDINARIO VIAGGIO IN ITALIA

ԿԱՐԼՈ ԼԱՋԻՆԻՈ, 1759–1838
ԴԻԵԳՈ ՎԵԼԱՍԿԵՍԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ
թուղթ, հատիչ, գունավոր օֆորտ, 28 x 18,5 / 43,5 x 34,5

CARLO LASINIO, 1759–1838
RITRATTO DI DIEGO VELASQUEZ
carta, bulino, acquaforte colorato, 28 x 18,5 / 43,5 x 34,5

La Galleria Nazionale di Armenia e l'Ambasciata d'Italia in Armenia presentano la mostra "Frammenti di arte d'Italia in Armenia", dedicata ad uno degli eventi più significativi della storia italiana, la proclamazione della Repubblica.

La celebrazione della Festa Nazionale della Repubblica Italiana presso la nostra Galleria è di natura simbolica. Il maggiore centro culturale in Armenia con la più rilevante collezione di arte comprende oltre 41.000 opere armene e straniere, nonché una collezione esclusiva di circa 200.000 fotografie con valore documentario e artistico, quaderni e lettere, articoli e oggetti personali che presentano famosi artisti armeni e stranieri, nonché eventi ed episodi importanti. Le basi per la politica di formazione ed espansione di un ricco e diversificato patrimonio furono poste negli anni '20 da Ruben Drambyan, il quale fu il primo Responsabile del Dipartimento Artistico del Museo di Armenia, in seguito Direttore della Galleria, segnando così il percorso futuro di questa importante struttura e portando la collezione, con i suoi contenuti e con la sua logica, in linea con i livelli dei più grandi musei europei.

Questa mostra ampia e multitematica, che presenta per la prima volta in Armenia le varie epoche e tendenze dominanti, le correnti artistiche e i diversi strati della cultura italiana, continua la serie di iniziative presso il nostro Museo a testimonianza del ricchissimo patrimonio storico, artistico e culturale italiano, e simboleggia l'amicizia secolare e i legami profondissimi tra le due antiche civiltà. Le prime opere d'arte italiane entrarono a far parte della collezione del Museo già negli anni '20; successivamente, questa fu attivamente e costantemente arricchita grazie a ulteriori donazioni, cessioni e acquisti.

I circa 100 dipinti, disegni e incisioni, sculture ed opere uniche di arte decorativa e applicata risalenti ai secoli XIV–XX, i quali sono una parte importante della collezione d'arte straniera della Galleria, coprono un periodo di circa 600 anni di sviluppo dell'arte italiana e mettono in mostra veri capolavori della nostra collezione museale.

Quest’ultima, rappresentata da singole opere di celebri maestri delle varie scuole pittoriche italiane (fiorentina, veneziana, genovese, ferrarese, veronese, romana) e caratterizzata dal confronto-contrasto delle soluzioni e delle tradizioni iconografiche proposte da periodi diversi, dalla varietà delle tendenze, dei problemi estetici, dei metodi creativi e delle soluzioni stilistico-morfologiche, ha un valore storico e artistico inestimabile.

Tra le opere pittoriche più antiche della collezione vi sono *Il Fidanzamento di Santa Caterina* e *La Madonna* di autore ignoto, appartenenti alla scuola di Lorenzo di Bicci, caratterizzata da una rilevante sintesi tra la stabile visione del mondo medievale e il nuovo pensiero artistico del Rinascimento. Il tema della figura della Madonna, ampiamente diffuso e amato nella pittura italiana, nella Galleria è presente con uno dei maggiori pittori ferraresi, noto per le scene religiose e per le decorazioni di affreschi, Benvenuto Tisi, meglio conosciuto come il Garofalo. Nell’ambito della mostra si nota la figura della *Madonna* anche nei dipinti di Sebastiano Conca e Francesco Mancini, maestri delle scuole napoletana e romana del XVIII secolo. Nella parte della collezione che rappresenta il periodo del Rinascimento è inoltre riservato un posto speciale al dipinto *Apollo e Pan* del celebre pittore Tintoretto.

L’arte pittorica italiana del XVII secolo è caratterizzata dalla varietà di metodi e soluzioni tecniche di raffigurazione, di tendenze emergenti, di problemi e trame artistiche affrontate e dalla ricchezza di pensiero e idee. Questo periodo è presentato nella Galleria dai temi religiosi dei famosi artisti italiani Sebastiano Ricci, Antonio Molinari, Giacomo Cavedone e altri, dai dipinti mitologici di Giulio Carpioni, dai paesaggi caratterizzati dall’espressività delle tecniche figurative di Giovanni Ghisolfi. Di particolare interesse sono il *Ritratto di Nicola Cucci*, caratterizzato da soluzioni barocche, del rinomato artista Bernardo Strozzi, detto il Cappuccino, e il ritratto del Senatore Bargellini del Guercino, uno dei più importanti rappresentanti della scuola bolognese. È interessante notare che il ritratto di Cucci è uno dei rari esemplari di questo genere realizzati dall’artista noto per le sue scene religiose e mitologiche.

ԱՆՏՈՆԻՈ (ԱՆՆԻԲԱԼԵ) ԿՈՍՏԱ, 1811–1887
ՏՈՍԿԱՆԱՅԻ ԴՔՍՈՒՀԻ ՄԱՐԻԱՆՆԱ ԿԱՐՈԼԻՆԱՅԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ, 1831
թուղթ, հատիչ, 54 x 38

ANTONIO (ANNIBALE) COSTA, 1811–1887
RITRATTO DI MARIANNA CAROLINA GRANDUCHESSA DI TOSCANA, 1831
carta, bulino, 54 x 38

ԱՆՏՈՆԻՈ ԿԱՆՈՎԱ, 1757–1822
ԶՂՋԱՑՈՂ ՄԱՐԻԱՄ ՄԱԳԴԱԼԵՆԱՑԻՆ
մարմար, 100 x 65 x 77

ANTONIO CANOVA, 1757–1822
MARIA MADDALENA PENITENTE
marmo, 100 x 65 x 77

Tra le “scoperte” dell’arte italiana del XVIII secolo vi sono le vedute, ovvero i paesaggi cittadini, che segnano il nuovo periodo di fioritura della scuola veneziana. A rappresentare questo genere nella Galleria Nazionale, noto per la raffigurazione di palazzi famosi e di dettagli architettonici, di monumenti e grandi canali, sono le “vedute” della scuola di uno dei principali artisti dell’epoca, il Canaletto, e la *Veduta di Scale* di Francesco Guardi.

La sezione della grafica, armena e straniera, costituisce una parte importante del patrimonio del museo e la mostra ne è testimone. La preziosa collezione di grafica e stampe italiane dei secoli XVI–XIX comprende incisioni, disegni e acquerelli di artisti di fama mondiale come Paolo Farinati (pittore, incisore, architetto operante a Verona nel XVI secolo); Luca Cambiaso (famoso artista manierista della scuola genovese, autore di numerosi affreschi di palazzi e chiese); Giovanni Pannini (noto maestro di paesaggi urbani del XVIII secolo), ed altri. Un posto speciale nella collezione di stampe italiane è infine occupato dal rinomato archeologo ed architetto, incisore virtuoso e maestro di acquaforte, Giovanni Piranesi, i cui paesaggi urbani sono tra le opere più significative in mostra.

L’esposizione continua con una sezione dedicata alla scultura italiana. L’opera più antica della collezione (secoli XV–XIX), che presenta diversi autori e scuole, è uno dei più rilevanti esempi di scultura del Primo Rinascimento: il bassorilievo in marmo *Madonna col Bambino* di Donatello, scultore rinascimentale, innovatore, il quale ha così definito l’ulteriore sviluppo della scultura europea. Merita inoltre una particolare attenzione la *Maria Maddalena Penitente* del “maestro del marmo” Antonio Canova, massimo rappresentante del Neoclassicismo italiano di fine Settecento – inizio Ottocento, che si ispirava alle sculture dell’antica Grecia e Roma. I problemi estetici e i contributi artistici del Classicismo sono ancor più condensati e raffigurati nell’arte di Vincenzo Luccardi, autore de *La ragazza con i piccioni*.

A completare la mostra vi è una parte dedicata all’arte decorativa e applicata dei secoli XVI–XX con degli esemplari unici di maiolica italiana e con tessuti fiorentini, veneziani, piemontesi in filo d’oro e d’argento, lino, seta, velluto. È di particolare interesse anche la cassa nuziale del XVI sec., meglio conosciuta come il “cassone”.

Vorrei infine sottolineare che il catalogo, relativo a circa sei secoli di arte italiana presente nella collezione della Galleria Nazionale di Armenia, comprende le opere in mostra, alcune delle quali vengono esposte e pubblicate per la prima volta.

Esprimiamo la nostra gratitudine all’Ambasciatore d’Italia in Armenia, Alfonso Di Riso, al personale dell’Ambasciata, nonché al personale della Galleria Nazionale per la realizzazione di questa importante iniziativa, la quale contribuisce certamente ad una percezione ancora più ampia della cultura e dell’arte italiana e all’approfondimento e al rafforzamento dei legami tra i nostri due Paesi.

Marina Hakobyan

Direttore della Galleria Nazionale
e curatore della mostra

ՍՏԵՖԱՆՈ ԴԵԼԼԱ ԲԵԼԼԱ, 1610–1664
ՔԱՂԱՔԻ ԲՆԱՆԿԱՐ ՖԻԳՈՒՐՆԵՐՈՎ
թուղթ, օֆորտ, չոր ասեղ, 10 x 17

STEFANO DELLA BELLA, 1610–1664
PAESAGGIO URBANO CON FIGURE
carta, acquaforte, puntasecca, 10 x 17

ՍՏԵՖԱՆՈ ԴԵԼԼԱ ԲԵԼԼԱ, 1610–1664
ԾՈՎԱՅԻՆ ՏԵՍԱՐԱՆ
թուղթ, օֆորտ, չոր ասեղ, 7,2 x 12,2

STEFANO DELLA BELLA, 1610–1664
PAESAGGIO MARINO
carta, acquaforte, puntasecca, 7,2 x 12,2

ԱՆՀԱՅՏ ՀՈՒՅՆ-ԻՏԱԼԱՑԻ ՆԿԱՐԻՉ, 14-ՐԴ Դ.
ՏԻՐԱՄԱՅՐ
փայտ, տեմպերա, 114 x 57,5

PITTORE SCONOSCIUTO GRECO-ITALIANO, XIV SEC.
MADONNA
tempera su tavola, 114 x 57,5

«Տիրամայր» և «Սբ. Կատարինեի նշանադրությունը» ստեղծագործությունները պատկանում են Տրեչենտո դարաշրջանին (14-րդ դ., Պրոտոռենեսանս) և իրենց հորինվածքային ձևաչափով կապված են միջնադարյան արվեստի ավանդույթներին. կերպարները հարթային են լուծված, հագուստները և մնացած մանրամասները զուսպ են: Ոսկեգույն, չեզոք ֆոնը զուրկ է հեռանկարից:

Նախկինում ենթադրվում էր, թե «Տիրամայր» պատկերը հավանաբար եղել է «Ավետում» տեսարանի դիպտիխի աջակողմյան հատվածը, սակայն հետագայում այդ մոտեցումը հերքվել է: Տիրամոր գլխի դիրքը և ստատիկությունը բնորոշ է դեհսուսյան ձևին:

Le opere *Madonna* e *Il fidanzamento di Santa Caterina* appartengono al periodo del Trecento (XIV secolo, Protorinascimento) e nella loro composizione sono legate alle tradizioni dell'arte medievale: i personaggi sono piatti, i vestiti e altri dettagli sono sobri. Lo sfondo dorato e neutro non dà alcuna possibilità di trasferimento prospettico allo spettatore.

In passato si pensava che l'immagine della Madonna potesse essere la parte destra del dittico con la scena dell'Annunciazione, ma questa ipotesi è stata successivamente smentita. La posizione della testa e la staticità della Madonna sono caratteristiche della deesis.

«Սբ. Կատարինեի նշանադրությունը» ստեղծագործությունը քրիստոնեական կրոնական գեղանկարչության սրբապատկեր է: Սյուժեն հաճախ հանդիպում է 14-րդ դարի եվրոպական գեղանկարչության մեջ, որտեղ Քրիստոսը նշանադրության մատանի է մեկնում Սբ. Կատարինեին. դա միստիկ ամուսնություն է, որը խորհրդանշում է նրանց հոգևոր կապը, Սբ. Կատարինեի «Քրիստոսի հարսնացու» լինելը: Կենտրոնում կանգնած է Տիրամայրը, ձեռքերում՝ մերկ Մանուկ Քրիստոսը: Առջևում՝ ձախից, փիլիսոփա, աստվածաբան, գիտնական, միջնադարյան սխոլաստիկայի ներկայացուցիչ Սբ. Ալբերտը՝ Ալբերտուս Մագնուսը, մի ձեռքով բացված գիրք է բռնել, մյուսով՝ շուշանի ճյուղ: Աջից պատկերված է Բարդուղիմեոս առաքյալը՝ մի ձեռքին գիրք, մյուսին վեր բարձրացրած սուր, որը խորհրդանշում է նրա չարչարանքները: Սբ. Ալբերտի ետևում վաղ քրիստոնեության մարտիրոս, կույրերի հովանավոր Սբ. Լուկիանոսն է, ձեռքերին՝ անոթ և արմավենու ճյուղ: Սբ. Բարդուղիմեոսի ետևում Սբ. Կատարինեն է, որի մատին Քրիստոսը նշանադրության մատանի է դնում: Շիկահեր մազերի վրա պատկերված է պսակ, ձախ ձեռքին՝ արմավենու ճյուղ:

L’opera *Il fidanzamento di Santa Caterina* è un’icona della pittura religiosa cristiana. La trama si ritrova spesso nella pittura europea del XIV secolo, dove Cristo presenta un anello di fidanzamento a Santa Caterina. È un matrimonio mistico che simboleggia il loro legame spirituale e l’essere la “sposa di Cristo”. Al centro si trova la Madonna, che tiene in braccio Gesù bambino nudo. Di fronte, da sinistra, c’è il filosofo, teologo, scienziato e rappresentante della scolastica medievale Sant’Alberto, detto Alberto Magno, che tiene in una mano un libro aperto e nell’altra un ramo di giglio. A destra è raffigurato l’apostolo Bartolomeo con un libro in una mano ed una spada alzata nell’altra a simboleggiare le sue sofferenze. Dietro Sant’Alberto è raffigurato San Luciano, tra i primi martiri cristiani, patrono dei ciechi, con in mano un vaso e un ramo di palma. Dietro San Bartolomeo si trova Santa Caterina al cui dito Cristo mette un anello di fidanzamento. Sui suoi capelli biondi è raffigurata una corona, nella mano sinistra c’è un ramo di palma.

ԼՈՐԵՆՅՈ ԴԻ ԲԻՉՉԻ (ԴՊՐՈՑ), 1350–1427
ՍՈՒՐԲ ԿԱՏԱՐԻՆԵԻ ՆՇԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
փայտ, տեմպերա, 93 x 47

LORENZO DI BICCI (SCUOLA), 1350–1427
IL FIDANZAMENTO DI SANTA CATERINA
tempera su tavola, 93 x 47

Իտալական գեղանկարչության բոլոնյան դպրոցը Հայաստանի ազգային պատկերասրահում ներկայացված է Ջակոմո Կավեդոնեի «Տիրամոր թագադրությունը» ստեղծագործությամբ: Կտավն իր գունային ցայտունությամբ իտալական բարոկկոյի վառ օրինակ է: Պատկերի սյուժեն ներշնչված է Կույս Մարիամի կյանքի եզրափակող լեգենդին: Մարիամը Հայր Աստծո և իր Որդու միջոցով գահ է բարձրացել որպես թագադրված թագուհի: Այս թեման կերպարվեստում հայտնի է դեռ Միջնադարից, Վաղ Վերածննդից և հարավային Բարոկկոյից:

Հեղինակն աշակերտել է Աննիբալե Կարրաչչիին, ազդեցություն է կրել Տիցիանից:

ՋԱԿՈՄՈ ԿԱՎԵԴՈՆԵ, 1577–1660
